# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/51» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» նոյեմբերի, 2018թ.
ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,
**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,
**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար
**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/51» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2018թ.-ի նոյեմբերի 27-ին, ժամը 12:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | *Ավտոմեքենաների անիվներ* | *80 030* |
| 2 | *Ավտոմեքենաների անիվներ* | *200 000* |

### 3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|
| «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ | info@flashmotors.am |

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

### 6. Մասնակիցների առաջարկած գները՝

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | *Ավտոմեքենաների անիվներ* | 73333.33 | 14666.67 | 88000 |
| 2 | *Ավտոմեքենաների անիվներ* | 180000 | 36000 | 216000 |

**7. Հանձնաժողովը որոշեց.**

Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով **«Ֆլեշ Մոտորս»** ՍՊԸ-ի հետ վարելու բանակցություններ՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

Նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 30-ին՝ ժամը 11:00-ին, Պետական դեպարտամենտի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***Գնահատող հանձնաժողովի նախագահ՝***

Ա. Ավագյան ---------------------------- (ստորագրություն)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Է. Մելքոնյան ---------------------------- (ստորագրություն)

Գ. Գաբրիելյան ---------------------------- (ստորագրություն)

Է. Տոնականյան ---------------------------- (ստորագրություն)

Լ. Հովհաննիսյան ---------------------------- (ստորագրություն)

***Գնումների համակարգող՝***
Օ. Աստոյան ---------------------------- (ստորագրություն)